

Հայոց լեզուն և Հայկական լեռնաշխարհը

(Ցեղասպանության զոհերի անմեռ հիշատակին)

Հրաչ Մարտիրոսյան

Բովանդակություն

Ներածություն

1. Հայոց լեզվի ներկայությունը նախաուրարտական Հայաստանում
2. Երկրագործությունը, այգեգործությունը և գինեգործությունը վաղնջահայոց մեջ
3. Արածանի գետի Մուրադ անվանման հայկական ծագումը
Գրականություն

*Արդարություն պահանջող ժողովրդի համար գաղափարների տարածման ձևերից լավագույնը
ճշմարտությունն ասելն է:*

Անտուան Մեյե, 20.02.1920, Փարիզ¹

Ներածություն

Ապրիլի 24-ը աշխարհի բոլոր ծագերում բնակվող հայերին միավորող ուժ է, որ պետք է ստիպի մի կողմ դնել ամեն տիպի տարաձայնություններ, համատեղել բոլոր ջանքերը և դրանք ուղղորդել դեպի կառուցվածքային ու արդյունավետ պայքար: Այդ պայքարն իր մեջ պետք է ընդգրկի ոչ միայն հայոց ցեղասպանության ճանաչման և հարակից հարցերը, որոնք միշտ էլ ուշադրության կենտրոնում են եղել, այլև հայ ժողովրդի՝ Հայկական լեռնաշխարհի միակ պատմական տիրոջ նախապատմության պատշաճ լուսաբանման, հայագիտության որակի կտրուկ բարձրացման, հայոց լեզվի ու հայ լեզվաբանության ծանր վիճակի բարեփոխման և այլ խնդիրներ:

Ես չեմ անդրադառնա այդ պայքարի պատմական, քաղաքական ու իրավական բաղադրիչներին: Իմ մտահոգության առարկաներն են հայոց լեզուն և հայերենագիտությունը: Ի հեճուկս իրենց անվառ ուղիքով մեր հայրենիք ներխուժած ու այն կոխկրտած թուրք ոճրագործների, որոնք մտադիր էին բնաջնջել հայերին ու հայոց լեզուն, մենք այսօր կանք և ունենք անկախ երկիր, որ իրավասու է բոլոր լծակները գործի դնելով զարգացնել հայագիտությունն ու, ինչպես բանաստեղծն է ասում, այնպես փայլեցնել հայոց լեզուն, որ «զրնգա արևի տակ»: Մակայն, որքան էլ դա տարօրինակ լինի, հայոց լեզուն և հայերենագիտությունը շարունակում են լինել վտանգված: Դեռ չխոսենք Սփյուռքում հայոց լեզվի մահացման մասին (իմ աչքի առջև գլխապտույտ արագությամբ հայերենը մեռնում է հուլանդահայոց մեջ. նույնիսկ Հայաստանում ծնված ու շուրջ մեկ տասնամյակ այնտեղ ապրելուց հետո Հոլանդիա տեղափոխված երեխաները ընդամենը մի քանի տարվա ընթացքում մոռանում են հայերենը): Ամենավատն այն է, որ հենց Հայաստանում էլ հայերենը ողբալի վիճակում է: Այս համատեքստում Հայաստանում օտարալեզու դպրոցներ բացելու նախագիծը առնվազն խոշոր սխալ է, եթե չասենք՝ հանցագործություն: Հայաստանում ապրող ոչ մի հայ երեխայի չի կարելի գրկել հայալեզու կրթությունից: Նույնիսկ նրա ծնողներն իրավունք չունեն, **Հայաստանում բնակվելով հանդերձ**, իրենց երեխայի համար նման որոշում կայացնել: Հայոց լեզուն գիտության լեզու է եղել սկսած հինգերորդ դարից, և հիմա ժամանակակից կրթական համակարգում այն թեկուզ մասամբ օտար լեզվով փոխարինելու միտքն անգամ ծիծաղելի է:

Հատկապես սպառնալի արագությամբ է հայոց լեզուն աղճատվում տեղեկատվության ամենագործող ասպարեզներում: Հայերեն գրագետ գրել ու խոսել սովորելու փոխարեն մարդիկ, որ ի վիճակի չեն մեկ սահուն ու անսխալ նախադասություն կազմելու, հեռուստաթերթն ու համացանցը լցնում են ցեղասպանության ճանաչման ու

¹ Մեյե 1978. 623:

հայրենասիրության մասին ճամարտակումներով, հողվածներով ու մեկնաբանություններով, ինչպես նաև հայոց լեզվի եզակիության մասին տգետ նյութերով, որոնք պատվազրկում են հայերենագիտությունը: Այն մարդիկ, որոնք **խայտառակ անգրագետ լեզվով** ելույթներ կամ մեկնաբանություններ են հրապարակում **թուրքերի դեմ**, պետք է գիտակցեն, որ դրանով **շարունակում են թուրքերի «հայերենասպան» գործունեությունը**: Նույն կերպ՝ այն մարդիկ, որոնք, հայագիտությունից ոչինչ չհասկանալով, **թուրք կեղծարարներին** հակահարված տալու մտայնությամբ հայագիտության վզին են փաթաթում հակագիտական գաղափարներ, պետք է գիտակցեն, որ դրանով **հայագիտությունն իջեցնում են թուրք կեղծարարների** մակարդակին: Հայեր, մենք կարիք չունենք կեղծարարության:

Ինչպես հայերենի բնիկ, այսինքն՝ հնդեվրոպական ծագման բառաթերքի ընդարձակ ստուգաբանական բառարանում, այնպես էլ իմ մի շարք հողվածներում, ես, մասնավորապես, ներկայացնում եմ Հայկական լեռնաշխարհում հայերենի ներկայության ապացույցներ նախաուրարտական ժամանակաշրջանում, քննում եմ բազմաթիվ մշակութային բառեր ուրարտերենում, քարթվելական նախալեզվում և այլուր, որոնք փոխառվել են հայերենից և այլն և այլն: Եվ քանի որ այդ աշխատանքներս հիմնականում գրվել են անգլերեն և անմատչելի են մնացել հայաստանյան ընթերցողների համար, ապա այս հողվածումս կփորձեմ հանրամատչելի գրույցների տեսքով ներկայացնել վերոհիշյալ դրույթներից մի քանիսը: Քանի որ սա հասցեագրված է ոչ մասնագետ հանրությանը, ես առավելագույնս կրճատում եմ գիտական ապարատը և նյութը շարադրում եմ առավելագույնս պարզեցված ձևով: Եթե ոմանք կամենան ավելի հանգամանորեն ծանոթանալ հողվածիս հիմքում ընկած աշխատանքներին հետ, ապա կարող են գրել ինձ. hrch.martirosyan@gmail.com:

Մեկ այլ առիթով հույս ունեմ ներկայացնել իմ մի այլ հողված, որտեղ ցույց եմ տալիս Արցախի և ՌԻտիքի տարածքներում հայոց լեզվի և, մասնավորապես, Ղարաբաղի բարբառի վաղ ներկայության ու զարգացման շարունակականության ապացույցներ: Այս նյութերը, գումարվելով այդ տարածքների մասին հայ և օտարալեզու պատմական աղբյուրներին և Ղարաբաղում ու հարակից տարածքներում փռված ավելի քան հազար վիմագիր արձանագրություններին, ծիծաղելիության աստիճան անհետեթե են դարձնում աղբյուրաչափի «պատմաբանների» հայտնի գառանցանքները:

1. Հայոց լեզվի ներկայությունը նախաուրարտական Հայաստանում

Անհրաժեշտ է գիտակցել, որ հայոց լեզվի կրողների (NB! ընդգծում եմ, խոսքը վերաբերում է ոչ թե հայերին ընդհանուր՝ մարդաբանական առումով, այլ հայոց լեզվի կրողներին)՝ Հայկական լեռնաշխարհում եկվոր լինելու տեսակետը հակահայ գիտնականների մոգոնվածքը չէ: Քանի որ հայերենն, անկասկած, հնդեվրոպական լեզու է, ապա հայերենի կրողներն ինքնըստինքյան պետք է Հայկական լեռնաշխարհ գաղթած լինեն հնդեվրոպական նախահայրենիքից, այսինքն՝ այն տարածքներից, որտեղ բնակվել է հնդեվրոպական նախալեզվով խոսող հանրությունը այդ նախալեզվի տրոհումից առաջ: Զարմանալի է, որ այս հանգամանքը շատերի մոտ հիվանդագին կերպով է ընկալվում: Հնդեվրոպական բոլոր լեզուներն էլ եկվոր են իրենց պատմական հայրենիքներում, նույնիսկ նրանք, որ ամենահինն են իրենց գրավոր հուշարձաններով ու ամենաշատն են լեզվական նյութ տրամադրում հնդեվրոպական նախալեզվի վերակազմության համար՝ խեթերենը, սանսկրիտը, ավեստերենը, հունարենը, լատիներենը և այլն: Պետք է առնվազն նախապաշարված լինել այստեղ անպատվաբերություն կամ ազգային անվտանգությանն առնչվող խնդիր տեսնելու համար: Կասկածից դուրս է, որ Հայկական լեռնաշխարհի մարդաբանական ու մշակութային ժառանգները հայերն են, և հայալեզու տարրը Հայկական լեռնաշխարհում է ավելի քան 3.000-3.500 տարի, մինչդեռ թուրքերն ընդամենը մեկ հազարամյակի ընթացքում մեր հայրենիք ներխուժած և այն զավթած ոճրագործներ են: ՌԻբեմս ի՞նչ նշանակություն ունի՝ հայերենի կրողները Հայկական լեռնաշխարհ են եկել երեք, չորս կամ հինգ հազար տարի առաջ թե այնտեղ են եղել «ի սկզբանե»:

Հնդեվրոպական նախամայր լեզուն սկսել է տրոհվել մոտ 6-7.000 տարի առաջ, իսկ ըստ այլ տեսակետի՝ մի քանի հազարամյակ ավելի վաղ: Նախահայրենիքի տեղայնացումը վիճահարույց է². այն մարդիկ, որոնք պնդում են, թե նախահայրենիքի տեղադրումը Հայկական լեռնաշխարհում արդեն վերջնականապես ապացուցված է, և այն էլ՝ «մաթեմատիկական ճշգրտությամբ», բացարձակապես անտեղյակ են խնդրի էությանը: Տեսականորեն անհնար չէ, որ, ի վերջո, նախահայրենիքի հայաստանյան կամ առաջավորասիական տարբերակը հետագայում ավելի ամրապնդվի: Մակայն անհրաժեշտ է հասկանալ, որ նման հարցերն այդպես հեշտությամբ չեն լուծվում: Այդ ուղղությամբ դեռ շատ աշխատանք պետք է կատարվի:

² Այս հարցի քննության վերաբերյալ տես Scherer 1968; Гамкрелидзе/Иванов 1984; Mallory 1989; Mallory/Adams 1997; 2006; Anthony 2007; Ivanov 2007:

Այս փուլում, այդուհանդերձ, կարող ենք վստահությամբ հերքել այն տեսակետը, ըստ որի հայերը Հայկական լեռնաշխարհում հաստատվել են ՌԻրարտուի անկումից հետո, այսինքն՝ մ.թ.ա. 6-րդ դարում: Այն, որ հայերն այստեղ էին շատ ավելի վաղուց, հստակորեն ապացուցվում է և՛ ուրարտերենի ու այլ հին լեզուների կողմից հայերենից փոխառված բառերի, և՛ սեպագիր հուշարձաններում վկայված հայկական ծագման տեղանունների օգնությամբ: Անդրադառնանք նախ առաջին, և ապա՝ երկրորդ կարգի մի քանի տվյալների³:

Ոսկեդարյան փուլից վկայված և բարբառների մեծ մասում պահպանված **արծուի** (սեռ. *արծուոյ, արծուեաց*) բառը բնիկ հայկական, այսինքն՝ հնդեվրոպական ծագում ունի. այն սերում է հնդեվրոպական **h₂rǵipió-* նախաձևից, որը հաստատվում է սանսկրիտ *rjipyá-* «արծիվ», ավեստերեն *ərəzifiio.parəna-* «արծվափետուր» և այլ զուգաձևերի օգնությամբ, ընդ որում հայերեն բառի հնչյունական ու քերականական զարգացումները միանգամայն օրինաչափ են բնիկ հայկական համատեքստում: Այս հիման վրա կարելի է ժխտել այն տեսակետները, որոնց համաձայն հայերեն բառը փոխառված է ուրարտերեն *arsibi-* բառից: Իրականում հայերեն բառի բնիկ հայկական հնդեվրոպական ծագումը հստակորեն պարզ է դարձնում, որ իրականում ուրարտական բառն է փոխառված հայերենից, ինչպես որ հայերենից են վերցվել վրացերեն *arciv-* «արծիվ» և արևելա-կովկասյան որոշ ձևեր:

Վերը ասվածն ավելի է ամրապնդվում հետևյալ հանգամանքներով: ՌԻրարտերեն բառը հանդես է գալիս միայն ձիու անվան կազմում և խուռերենում չունի ցեղակից զուգաձև: Արագընթաց ձիու պատկերավոր զուգորդումը արծվի կամ ուրուրի հետ հատուկ է ինչպես հայկական (հմտ. վիպասանական հայտնի հատվածում Արտաշես արքայի ձիու համեմատությունը *արծուի սրաթելի*-ի հետ), այնպես էլ հնդիրանական և հունական բանաստեղծական ավանդույթներին: Հատկանշական է, որ Ռիզվեդայում (4.38.2 նն) *Dadrika-* ձիու պատկերավոր համեմատությունը ներկայացվում է *rjipyám syenám* բառակապակցությամբ, որտեղ *rjipyá-* բառը, որը, ինչպես տեսանք, ցեղակից է հայերեն *արծուի* բառին, հանդես է գալիս որպես մակդիր *syená-* «մի գիշատիչ թռչուն, բազե, արծիվ»-ի, որը բխեցվում է հնդեվրոպական **kiH-(i)no-* կամ **kiH-eno-* նախաձևից և ցեղակից է ավեստ. *saēna-* «մի գիշատիչ թռչուն», հուն. *ικτινος* «ուրուր» և հայ. *ցին* «ուրուր, ցին» բառերին⁴: Փաստորեն, հայերեն **արծուի** և **ցին** բառերն ամենայն հավանականությամբ սերում են հայ-հունա-հնդիրանական բանաստեղծական լեզվից: Հատկանշական է նաև, որ հայ-հնդարիական բանաստեղծական հնագույն ավանդույթի գոյությունը փաստվում է այնպիսի օրինակներով, ինչպիսիք են **արև**, **երգ**, **ձի** և **սուրբ** բառերը:

Հայ. **բուրգն** (սեռ. *բրգան*) «աշտարակ, բուրգ» և նրան համադրվող հուն. *πίργος* «աշտարակ» բառերը դիտարկվում են որպես հնդեվրոպական նախալեզվի տրոհմանը հաջորդած ժամանակաշրջանում միջերկրածովյան ենթաշերտից սերող մշակութային փոխառություններ: ՌԻրարտերեն *burgana* «ամրոց» բառը կարող է համարվել հայկական փոխառություն:

Հատկանշական է, որ ուրարտերենում արտացոլված են ոչ միայն հայերեն մշակութային բառեր, այլև ուրիշ իմաստաբանական խմբերի բառեր, օրինակ՝ **ծով** > ուրարտ. *šúə*, և, որ ավելի էական է, նույնիսկ մի շաղկապ՝ *e-’a* «և, նույնպես, կամ», որը կարող է ընթերցվել *e-wi* և բխեցվել բնիկ հայկական (այսինքն՝ հնդեվրոպական ծագման) **և** շաղկապից⁵:

Քննվող հարցի համար էական նշանակություն ունեն նաև բնիկ հայկական ծագման տեղանունները: Հայ պատմական լեզվաբանության կարևորագույն խնդիրներից մեկն է տեղանվանական համակարգի ամբողջական ուսումնասիրությունը և նրա բազմաշերտ կառուցվածքի քննությունը հայոց լեզվի ու մշակույթի զարգացման համատեքստում: Սա կարող է օգնել առանձնացնել տեղանվանական համակարգի հնագույն՝ հնդեվրոպական նախալեզվից ժառանգված շերտը հետագա փուլերի փոխառյալ շերտերից և ուրվագծել Հայկական լեռնաշխարհում հայախոս տարրի զարգացման փուլերը:

Որևէ տեղանվան հնդեվրոպական ստուգաբանությունը կարող է քիչ թե շատ հավաստի համարվել, եթե այն բավարարում է հետևյալ չափանիշներից առնվազն երեքին կամ չորսին. 1) տեղանունը հուսալիորեն վկայված է հայ և/կամ օտարալեզու աղբյուրներում. 2) նրա հնությունը երաշխավորվում է սեպագիր աղբյուրների օգնությամբ. 3) նրա հենքում ընկած է հնդեվրոպական ծագման բառ. 4) տեղանունը պարունակում է հայերենում չվկայված հիմնաբառ, որ կարող է բխեցվել հնդեվրոպական որևէ արմատից. 5) հիմնաբառի իմաստը համապատասխանում է տվյալ տեղանվան տիպին. 6) իմաստաբանական հենքը հաստատվում է տվյալ տեղանվան այլ անվանումների իմաստաբանությամբ. 7) տվյալ հնդեվրոպական բառույթից տեղանուններ են կերտվել նաև այլ հնդեվրոպական լեզուներում:

³ Հողվածիս նպատակից դուրս են հարցի քննության պատմությունը և եղած տեսակետների շարադրանքը (տես հատկապես Diakonoff 1984; Джаукян 1985; 1988; Ջահուկյան 1987; Պետրոսյան 2006; Petrosyan 2007): Ներկայացվող նյութերը հանգամանորեն քննված են իմ մենագրության (Martirosyan 2010) համապատասխան բառահոդվածներում: Բնիկ հայկական ծագման տեղանունների մասին տես Martirosyan 2010: 669-686, 809-816:

⁴ Steu de Lamberterie 1978. 261⁹²; Watkins 1995. 170:

⁵ Steu Diakonoff 1992: 52; Арутюнян 2001: 442a:

Ինչպես ցույց է տվել իմ նախորդ հոդվածում, *Քարահունջ* տեղանվան՝ իբր մեզայիթյան հուշարձանի անվան ստուգաբանության փորձերը դատապարտված են ձախողման, քանի որ դրանցում արհամարհված են այս բոլոր սկզբունքները: Բավական է ասել միայն, որ այդ հուշարձանը, պարզապես, *Քարահունջ* չի էլ կոչվել: Բացի այդ, արհամարհված են նաև գիտական տարրական բարեխղճության նորմերը, ըստ որոնց յուրաքանչյուր տեղանվան քննություն պետք է սկսվի հինգհատորյա հայտնի «Տեղանունների բառարան»-ից (ՀայՏեղԲառ 1-5) և Հյուբմանի «Հին Հայոց տեղոյ անունները» (1904, հայ. թարգմ.՝ 1907) աշխատությունից, որը, հին ու թերի լինելով հանդերձ, մնում է հայոց տեղանունների միակ գիտական ստուգաբանական բառարանը: Նշված «ստուգաբանությունների» հեղինակները չեն գործածում նույնիսկ այս ստանդարտ ու հիմնարար աշխատությունները, ուր մնաց ծանոթ լինեն ավելի սպեցիֆիկ գրականության:

Որպեսզի պարզ լինի, թե ինչպես կարելի է փորձել առաջադրել տեղանունների գիտական այնպիսի ստուգաբանություններ, որոնցում բավարարվեն վերոհիշյալ սկզբունքներից գոնե մի քանիսը (ընդ որում նույնիսկ նման դեպքերում ստուգաբանությունները հաճախ շարունակում են մնալ անհամոզիչ), դիտարկենք, օրինակ, Սասունում գտնվող *Միս* հայտնի լեռնանունը, որը քանիցս վկայված է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ և առանցքային տեղ է գրավում, մասնավորապես, Հայաստանի բնակեցման ավանդույթների համատեքստում: Գարծում է՝ այն կարելի է բխեցնել հնդեվրոպական **Kiehmo-* արմատից, որն արտացոլված է սանսկ. *śyāmā-* «սև, մուգ», լիտվ. *šėmas* «կապտագորշ» և այլ բառերի մեջ: Լեռնանունները հաճախ են ածանցված լինում «սև, մուգ» կամ «մուր» իմաստներից, հմմտ. *Մթին լեռն*, *Սեալ լեռն*, *Միահ-կուհ/Ղարա-դաղ* և այլն: Հնդեվրոպական տվյալ արմատը լեռնանուն կերտել է նաև ավեստերենում՝ *Siiāmaka-* (հմմտ. նաև սանսկ. *Śyāmā* գետանունը): Հատկանշական է, որ նույն բնիմաստն է ընկած նաև Միմ սարի ավելի երիտասարդ անվան *Մե-սար*-ի հիմքում:

Գարելի է եզրակացնել, որ տվյալ տարածքում հայալեզու տարրի հաստատման վաղնջական ժամանակներից ի վեր լեռը կոչվել է այս բնիկ հայկական (այսինքն՝ հնդեվրոպական ծագման) անվամբ: Այս դրույթն, իհարկե, ավելի հիմնավոր կլիներ, եթե *Միս* լեռնանունը վկայված լիներ սեպագիր հուշարձաններում: Ցավոք՝ նման վկայություն մեզ առայժմ հայտնի չէ, թեև սա, իհարկե, վճռական կովան չէ լեռնանվան հնության դեմ: Փոխարենը ունենք մի շարք այլ տեղանուններ, որոնք անվիճելիորեն հայկական ծագում ունեն, և որոնց հնությունը երաշխավորված է սեպագիր հուշարձաններում վկայված լինելու հանգամանքով: Հստակ օրինակ է Տուրուբերանի գավառներից մեկի անունը՝ *Տուարածատափ* («Աշխարհացոյց») կամ *Տուարածոյ տափ* (Արիստակէս Լաստիվերտցի), որ կազմված է *տուարած* (< **տուար-արած* = *տուար* + *արած*՝ *-ար-* հնչյունախմբերից մեկի կրճատմամբ, այսպես կոչված հապլոլոգիայով) և *տափ* բառերից: Այս տեղանունն ակնհայտորեն արտացոլված է ուրարտական *Tuarašini hubi* ձևով: Այստեղ հայ. *տափ* բառի փոխարեն հանդես է գալիս ուրարտ. *hubi* հոմանիշը, որն ամենայն հավանականությամբ առնչվում է հայկական տեղանուններում հաճախ հանդիպող *հովիտ* բառին: Հատկանշական է, որ, ինչպես ուրարտական մի արձանագրության հիման վրա եզրակացնում է նշանավոր ուրարտագետ Ն. Հարությունյանը, *Tuarašini hubi* վայրը պետք է շատ առատ լիներ խոշոր ու մանր եղջերավոր անասուններով:

Ինչ վերաբերում է մ.թ.ա. 2-րդ և 3-րդ հազարամյակների նյութերին, ապա հարցն ավելի բարդ է: Այս ժամանակաշրջանի գրավոր հուշարձաններում հայալեզու տարրի վկայվածության համոզիչ դեպքեր գրեթե չեն ներկայացվել: Այդուհանդերձ, կարծում եմ, կան որոշ հետաքրքիր մշակութաբառեր, որոնք կարող են վերաբերել այս ժամանակաշրջանին, ընդ որում որոշ դեպքերում (հատկապես *ջնար* երաժշտական գործիքի) հայերեն ձևերի առանձնահատուկ կարևորությունն ակնհայտ է: Սակայն այս հոդվածում դրանց չեմ անդրադառնա: Եթե ընթերցողները հետաքրքրություն ցուցաբերեն, ապա մոտ ապագայում կփորձեմ գրել նաև այս մասին: Այստեղ հպանցիկորեն կանդրադառնամ հայերի *հայ* ինքնանվանմանը, որի վերաբերյալ մինչ այժմ եղած ստուգաբանություններն ինձ համոզիչ չեն թվում:

Ամենայն հավանականությամբ *հայ* անվանումն ու *Հայ-ք* երկրանունն առնչվում են *Hajaša-* երկրանվան հետ: Վերջինս հիշատակվում է մ.թ.ա. 14-13-րդ դարերի խեթական տեքստերում: Այս երկիրը տեղադրվում է պատմական Հայաստանի հս-արմ. եզրամասերում, հավանաբար՝ Ճորոխի հովտում և հարակից տարածքներում: Ըստ ակադեմիկոս Գևորգ Զահուկյանի կողմից առաջարկված և իմ կողմից զարգացված վարկածային տեսակետի՝ *Hajaša-* և *Հայ-ք* (սեռ. *Հայոց*) երկրանունները բխում են հնդեվր. **hajos-* (*s-* հիմք, չեզոք սեռ) «մետաղ, պղինձ, երկաթ» արմատից, որից սերում են սանսկ. *āyas-*, ավեստ. *aiaha-*, լատ. *aes*, գոթ. *aiz* և այլն: Երկրանվան բնիմաստը կլինի, այդ կերպ, «մետաղի կամ երկաթի երկիր», իսկ *հայ* ցեղանվան բնիմաստը՝ «մետաղի/երկաթի երկրի բնակիչ»: Հատկանշական է, որ նմանատիպ իմաստաբանական հենք ունի նաև Հայաստանի մերձակա տարածքներում բնակված *խալլուբների* անվանումը, որի հիմքում ընկած է հուն. *χάλυβ* «թրծած երկաթ, պողպատ» բառը, ընդ որում խալլուբները հոչակված են եղել որպես հմուտ երկաթագործներ/ պողպատագործներ (*οἱ σιδηροτέκτονες χάλυβες*): Հայերի ու խալլուբների սերտ հարաբերությունը փաստվում է *Armenochalybes* էթնոնիմի գոյությամբ⁶:

⁶ Տե՛ս Martirosyan 2010. 382-385:

2. Երկրագործությունը, այգեգործությունը և գինեգործությունը վաղնջահայոց մեջ

Բզոր Դյակոնովի հայտնի տեսության համաձայն (Diakonoff 1984)՝ հայերը նույնացվում են մ.թ.ա. 12-րդ դարում Հայկական լեռնաշխարհի թափանցած մուշկերի հետ և, հիմնականում լինելով անասնապահներ, միայն 10-9-րդ դարերում են անցել նստակյացության, հողագործության և խաղողագործության (Дьяконов 1983. 169-171): Մակայն լեզվական տվյալներն այլ բան են ասում: Հայերենում առկա են նշված իմաստային դաշտերին պատկանող բազմաթիվ բառեր, որոնք բնիկ հայկական՝ հնդեվրոպական ծագում ունեն (մի մասը՝ ուշ հնդեվրոպական կամ էլ հնագույն միջերկրածովյան ենթաշերտի, որի դեպքում նույնպես երաշխավորված է բավականաչափ հին լինելը): Ստորև ներկայացնում եմ մի քանի օրինակների ցուցակ (տես Martirosyan 2010, համապատասխան բառահողովածներում. ենթաշերտային բառերի համար տես նաև Martirosyan 2007), որը շատ հեռու է սպառիչ լինելուց.

հողի մշակում, ոռոգում – (h)անդ, առու – ա/ռոոգ(ան)են, արաւր, արտ, բարդ, հարաւունք, ցեյ, ուրդ («պարտեզները ջրելու փոքրիկ առու»), քաղ և այլն.

այգեգործություն/խաղողագործություն, գինեգործություն – այգի «խաղողի որթ. խաղողի այգի», արգաստ «խաղողի որթի կտրված ճյուղերը», գինդ «խաղողի ընձուղ», գինի «խաղողի գինի», որթ «խաղողի որթ» և այլն.

այլ մշակովի բույսեր (հիմնականում միջերկրածովյան ծագման) – գարի, ոլոռն, ռսպն, սիսեռն և այլն.

հացահատիկ աղալու գործիքներ – աղաւրի, երկան, մուլ:-

Ուշագրավ է, որ հին հայոց ամսանուններից շատերն իրանական ծագում ունեն, սակայն դրանցից մի քանիսը բնիկ հայկական են և վկայում են, որ, մինչև իրանական ազդեցության շրջանը, վաղնջահայերն ունեին երկրագործական օրացույց: Այս մասին պատրաստում եմ մի ընդարձակ հոդված. էթե հետաքրքրություն առաջանա, սրա հայերեն տարբերակն էլ կարող եմ պատրաստել ու տեղակայել համացանցում:

Հայոց մշակույթում գինեգործության վաղեմիության և տարածաշրջանում ունեցած կարևոր դերի մասին է վկայում գինի (սեռ. *գինւոյ*) բառը, որն անկասկած բնիկ հայկական՝ հնդեվրոպական ծագում ունի, հմմտ. իւեթ. *uian-*, հիերոգլիֆյան լուվերեն *wijan(i)-*, հուն. (*φ*)*oivos*, լատ. *vinum* և այլն. բոլորը նշանակում են «գինի»: Հայերեն *գինի* բառի հին ձևը՝ **գինի(j)n-* (հմմտ. սեռ. *գինւոյ*, գործ. *գինւո-վ*), օրինաչափորեն սերում է **ye/oi(H)ni-* նախաձևից: Հայերեն այս բառը բավականաչափ հին մի էտապում փոխառվել է քարթվելական նախալեզվի կողմից - **ywin-* «գինի». վրաց. *yvino-*, մեգրել. *yvin-*, լազ. *y(v)in-*, սվան. *ywin-el/äl*, բոլորը՝ «գինի»: Չնայած քարթվելիստների եռանդուն դիմադրությանը այս տեսակետը մերժելու ոչ մի լուրջ պատճառ չկա: Հնդեվրոպական բառակցի **y-* հնչույթը հայերենում *q-* դառնալուց առաջ նախ դրսևորվել է **y^w*- անցումային տարբերակով, որն էլ քարթվելականում արտացոլվել է որպես **y^w*:- Այսպիսով՝ հին հայ. **y^weinjo-* > քարթվ. **ywin-*:-

Սա հստակորեն հաստատվում է մեկ այլ նմանատիպ օրինակով: Հայերեն *գի* «գինի ծառ» բառը, որը սերում է հնդեվրոպական **yei(H)t-* արմատից՝ բառակցի նույն **y-* > **y^w* > *q-* զարգացմամբ և **-t-*ի օրինաչափ անկումով, փոխառվել է քարթվելական լեզվի կողմից **ywi-* «գինի» տեսքով:

3. Արածանի գետի Մուրադ անվանման հայկական ծագումը

Արածանի գետը (Արևելյան Եփրատ) հիմնականում հայտնի է *Մուրատ/դ* անվամբ, որը ներկայացված է թուրքական հետևյալ տարբերակներով՝ *Murat ımağrı*, *Murat nehri*, *Murat suyu*, *Murat çayı* «Մուրադ գետ»: Այս գետանունը սովորաբար համաժամանակյա կտրվածքով նույնացվում է թուրքերեն *մուրադ* «մտադրություն, իղձ, նպատակ, մուրազ» (*murat*, *-di* ‘purpose, intention, desire’) բառի կամ դրանից սերող *Մուրադ* անձնանվան հետ (տես, օրինակ, Steuerwald 1972. 657b): Այդ առնչությունը դրսևորվում է, օրինակ, Արճակում գրառված հետևյալ բանահյուսական նմուշներում հանդիպող հետաքրքիր բառախաղերում (Ավագյան 1978. 96b, 134b).

*Տիրիս խասավ կյետ Մուրադին,
Տյու էլ խասար քյու մուրադին:*

*Էկանք խասանք Մուրադա կյետ,
Մուրադըմ տուր, նոր տառնանք ետ:*

Չնայած այս համաժամանակյա գուգորդմանը՝ տվյալ մեկնաբանությունը դժվար թե արժե համարել գիտական: Դրա հիմքում ընկած իմաստաբանությունը տիպական չէ գետանվան համար, իսկ սպեցիֆիկ դեպք ենթադրելու համար բուն շարժառիթներ հայտնի չեն: Հետևաբար գետանվան բուն ծագումը համարվում է անհայտ (հմմտ. Belck 1901. 45; Hartmann 1965. 945b):

Առաջարկում եմ գետանունը բխեցնել հայերեն *մաւր* «ճահիճ» բառից, որը գրավոր հուշարձաններում հուսալիորեն վկայված է սկսած 5-րդ դարից (Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի ն) և ուշ հնդեվրոպական ծագում ունի, հմմտ. լիտվ. *máuras* «ցեխ», *maurai* «ճահճաբույս. ցեխ, տիղմ», ռուս. *мыр-ок* «մարգագետնի խոտ» և այլն: Հետդասական և միջինհայերենյան ժամանակաշրջաններում հանդիպում են նաև *-տ* ածանցական տարր պարունակող տարբերակներ՝ *մաւր-ատ*, *մուր-ատ*, *մօր-ոտ*, *մուր-ոտ*, *մուր-տ* և այլն: Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» մեջ բառը հիշատակվում է մի քանի անգամ՝ *մաւր*, *մուր-տ* և *մուր-ատ* ձևերով, և վերաբերում է Տարոն և Հաշտյանք գավառներում՝ Արածանի գետի ափամերձ տարածքներում գտնվող ճահճուտներին: Բառի *մաւր* և *մաւր-ատ* հիմնաձևերը պահպանվել են Խոտորջուրի և հարավ-արևմտյան մի շարք բարբառներում՝ Սեբաստիա, Ջեյթուն, Սվեդիա և այլն:

Հայ. *մաւր* «ճահիճ» բառը հանդես է գալիս նաև գետանուններում. *Մեծ-ա-մաւր* (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, «Աշխարհացոյց» և այլն) կամ *Մեծ մաւր* (Մովսես Խորենացի), *Մուրց* կամ *Մուրց-ա-մաւր* (Մովսես Խորենացի, «Աշխարհացոյց»), *Խօզ-ւօր* («Աշխարհացոյց»): Վերջին գետանվան առաջին բաղադրիչը սխալմամբ նույնացվել է *խոզ* կենդանաբառին: Իրականում այն *խօզ* «ճահճաբույս, ջրիմուռ» բառն է: Այս *խօզ-ւօր* բառը բառի բնիմաստն է, այսպիսով, «մամռածածկ ճահիճ». հմմտ. նաև Սեբաստիայի բարբառի **խօզ-մրատ* «ճահիճ. կանգնած ջրերի հոտած տիղմ» բառը: Մրա առաջին բաղադրիչը նույնպես նույնացվել է *խոզ* կենդանաբառին, սակայն իրականում բառը կազմված է *խօզ* «ճահճաբույս, ջրիմուռ» և *ւօ/ուրատ* «ցեխ, ճահիճ» արմատներից:

Ինչպես վերը նշեցի, Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» մեջ *մուր-ատ* և այլ ձևերով հիշատակվում են հենց Մուրաղ՝ Արածանի գետի ափամերձ տարածքների ճահճուտները: Նկատի ունենալով այս հանգամանքը, ինչպես նաև այն, որ *մաւր* բառը գրաբարի հնագույն շրջանից սկսած հանդես է գալիս մի շարք գետանունների կազմում, և որ հետդասական ու միջինհայերենյան ժամանակաշրջանների *մօրատ* և *մուրատ* ձևերը ներկայացված են հիմնականում հարավ-արևմտյան բարբառներում, կարելի է Արածանի գետի *Մուրատ/դ* անվանման հիմքում տեսնել *ւօ/ուրատ* «ճահիճ» բառը:

Այն, որ «Տարոնի պատմության» հեղինակը կամ խմբագրողը եղել է Տարոնի կամ մերձակա տարածքների բարբառի ներկայացուցիչ, կարող է անուղղակիորեն հաստատվել հետևյալ օրինակով: Հայերեն *գազպէն* «մանանա» բառը հայտնի է սակավադեպ գրական վկայություններով և ներկայացված է գլխավորապես Մշո ու Կարնո խմբերի բարբառներում, որոնց հին վիճակները հավանաբար հիմնականում խոսվել են Տուրուբերան նահանգում և Բարձր Հայքի ու Այրարատի՝ Տուրուբերանին հարող տարածքներում: «Աշխարհացոյցում» *գազպէն/էն*-ը ներկայացվում է որպես Տուրուբերանի արտադրություն, իսկ «Տարոնի պատմության» հեղինակը / խմբագրողը մանանայի մասին ասում է. *գոր գազպէն կոչենք* «որը մենք *գազպէն* ենք կոչում»:

Ամփոփում. ըստ ներկայացված վարկածային տեսակետիս՝ Արածանի/Մուրաղ գետի հին հայկական անվանումը եղել է **Մօրատ/Մուրատ*, որն իրենից ներկայացնում է մի շարք գետանունների կազմում հանդես եկող *ւօր* (= *մաւր*) «ճահիճ, կանգնած ջուր» բառի *-ատ* ածանցով տարբերակը: Վերջինս՝ *մօրատ/մուրատ*, իսկապես վկայված է մատենագրության մեջ և պահպանվել է հիմնականում հարավ-արևմտյան բարբառներում: Հատկանշական է, որ Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» մեջ *մուր-ատ* և այլ ձևերով հիշատակվում են հենց Մուրաղ՝ Արածանի գետի ափամերձ տարածքների ճահճուտները Տարոն և Հաշտյանք գավառներում: Հետագայում **Մօրատ/Մուրատ* գետանունը ժողովրդական ստուգաբանությամբ գուգորդվել է թուրքերեն *մուրաղ* բառին ու նրանից ածանցված *Մուրաղ* անձնանվանը⁷:

բանաս. գիտ. դոկտոր (PhD, Լեյդենի համալսարան) **Հրաչ Մարտիրոսյան**
էլ. հասցե՝ hrch.martirosyan@gmail.com
23.04.2011, Լեյդեն

⁷ Այս պարագրաֆում ներկայացված նյութի վերաբերյալ ավելի մանրամասն տես Martirosyan 2009:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աճատեան, Հրայր Նալբանդյան
 1902 Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ. Մոսկուա-Վաղարշապատ («Էմինեան ազգագրական ժողովածո», հտ. Գ):
 1913 Հայերէն գաւառական բառարան. Թիֆլիս («Էմինեան ազգագրական ժողովածո», հտ. Թ):
 1971-79 (ՀԱԲ), Հայերէն արմատական բառարան, 4 հատորով (2-րդ հրատ.). Երևանի համալսարանի հրատարակչություն [1-ին հրատ. 1926-1935, 7 հատորով]:
- Ավագյան, Սերինե Մովսէսի
 1978 Արձակ. *Հայ ազգագրություն և բանահյուսություն* 8:
- Հիւրջման, Հ.
 1907 Հին Հայոց տեղոյ անունները. Հայոց աշխարհին պատմական տեղագրութեան մասին ուսումնասիրութիւններով (Hübschmann 1904-ից թարգմ. Հ. Բ. Պիլէզիկճեան). Վիեննա. Միխիթարեան տպարան («Ազգային մատենադարան» ԾԳ):
- Մէլե, Անտուան
 1978 Հայագիտական ուսումնասիրություններ (կազմեց, ֆրանսերէնից թարգմանեց և ծանոթագրեց Մ. Մինասյանը). Երևանի համալսարանի հրատարակչություն:
- Պետրոսյան, Արմեն
 2006 Հայոց ազգածագման հարցեր. Երևան. «Նորավանք» ԳԿՀ:
- Ջահուկյան, Գ. Բ.
 1986 Հայկական շերտը ուրարտական դիցարանում. *ՊԸՀ* 1986, № 1.43-58:
 1987 Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
 1988 Ուրարտերէնը և հայերէնը. *Ուրարտական և հայերէնը* 1988.127-168:
- Арутюнян, Н. В.
 2001 Корпус урартских клинообразных надписей. Ереван: Издательство ‘Гитутюн’ НАН РА.
- Гамкрелидзе, Т. В. & Иванов, Вяч. Вс.
 1984, 1-2 Индоевропейский язык и индоевропейцы: реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультур. С предисловием Р. О. Якобсона. Тбилиси: Издательство Тбилисского Университета.
- Джаукян, Г. Б.
 1985 Урартские заимствования в армянском языке. *КультНаслВост* 1985. 364-372.
 1988, 1-2 О соотношении хайасского и армянского языков. (1) *ИФЖ* 1988, № 1: 60-79; (2) *ИФЖ* 1988, № 2: 68-88.
- Дьяконов, И. М.
 1983 К праистории армянского языка (о фактах, свидетельствах и логике). *ИФЖ* 1983, № 4: 149-178.
- Anthony, David W.
 2007 The horse, the wheel, and language: how Bronze-Age riders from the Eurasian steppes shaped the modern world. Princeton and Oxford: Princeton University Press.
- Belck, Waldemar
 1901, 1-2 Beiträge zur alten Geographie und Geschichte Vorderasiens. 2 vols. Leipzig: Verlag von Eduard Pfeiffer.
- Diakonoff, I. M.
 1984 The pre-history of the Armenian people (transl. from D’jakonov 1968 by Lori Jennings; with revisions by the author). Delmar, New York: Caravan Books (Anatolian and Caucasian studies).
 1992 First evidence of the Proto-Armenian language in Eastern Anatolia. In: *Annual of Armenian linguistics* 13: 51-54.
- Gray, Russell D. & Atkinson, Quentin D.
 2003 Language-tree divergence times support the Anatolian theory of Indo-European origin. In: *Nature* 426 (27 November 2003). www.nature.com/nature.
- Hartmann, R.
 1965 al-Furāt. In: *The encyclopaedia of Islam*. Leiden: Brill, etc.: 945-947.
- Ivanov, Vyacheslav V.
 2007 The Indo-European homeland in the Near East: new evidence. In: *Bulletin of the Georgian National Academy of Sciences: humanities & social sciences – history & philology*, vol. 175, no. 3: 127-137.
- Lamberterie, Charles de
 1978 Armeniaca I-VIII: études lexicales. In: *Bulletin de la Société de Linguistique de Paris* 73: 243-285.
- Mallory, J. P.
 1989 In search of the Indo-Europeans: language, archaeology and myth. London: Thames and Hudson.
- Mallory, J. P. & Adams, D. Q.
 1997 (eds.), *Encyclopedia of Indo-European culture*. London, Chicago: Fitzroy Dearborn Publishers.
 2006 The Oxford introduction to Proto-Indo-European and the Proto-Indo-European world. Oxford: Oxford University Press.
- Martirosyan, Hrach K.
 2007 Mediterranean-Pontic substratum words. In: *Aramazd: Armenian journal of Near-Eastern studies*, vol. 2 (Yerevan: Association for Near Eastern and Caucasian Studies): 88-123.
 2009 Armenian *mawr* ‘mud, marsh’ and its hydronymical value. In: *Aramazd: Armenian journal of Near Eastern studies*, vol. 4.1: 73-85 and 179-180 (Summary in Armenian).
 2010 Etymological dictionary of the Armenian inherited lexicon. Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series, 8).

- Petrosyan, Armen
2007 The problem of identification of the Proto-Armenians: a critical review. In: *Journal of the Society for Armenian Studies* 16: 25-66.
- Renfrew, Colin
1987 *Archaeology and language: the puzzle of Indo-European origins*. London: Jonathan Cape (2nd edition – London: Pimlico, 1998).
- Scherer, Anton
1968 (ed.), *Die Urheimat der Indogermanen*. Darmstadt: Wissenschaftliche Buchgesellschaft. (Wege der Forschung; Bd. 166).
- Steuerwald, Karl
1972 *Türkisch-Deutsches Wörterbuch*. Wiesbaden: Otto Harrassowitz.
- Watkins, Calvert
1995 *How to kill a dragon: aspects of Indo-European poetics*. New York, Oxford: Oxford University Press.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱԲ 1-4, տես Աճառյան 1971-79

ՀայՏեղԲառ 1-5

(1986-2001), *Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Քախչյան, Հ. Խ. Բարսեղյան*, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հտ. 1, 1986; հտ. 2, 1988; հտ. 3, 1991; հտ. 4, 1998; հտ. 5, 2001. Երևանի համալսարանի հրատարակչություն:

ՆՀԲ 1-2

Գ. Աւետիքեան, Խ. Սիրումելեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի. Վենետիկ. Սուրբ Ղազար, 1836-1837. 2-րդ հրատ. Երևան. Երևանի համալսարանի հրատարակչություն, 1979-1981:

ՊԲՀ (ИФЖ)

Պատմա-բանասիրական հանդես. Երևան. ՀՍՍՀ ԳԱ (ՀՀ ԳԱԱ) հրատարակչություն:

ՊԲՀ (ИФЖ)

Պատմա-բանասիրական հանդես. Երևան. ՀՍՍՀ ԳԱ (ՀՀ ԳԱԱ) հրատարակչություն:

Ուրշայ 1988

Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Մարգարյան, Ուրարտու-Հայաստան. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:

ИФЖ

Историко-филологический журнал, տես ՊԲՀ

КультНаслВост

Культурное наследие Востока: проблемы, поиски, суждения. Ленинград: “Наука”, 1985.